




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՀԱՐԵ

**ԿՈՄՄՅՆԵՐԻՆ
ԿԱՂՈՒՆ**

891.99

7-16

7-16

44

ՊԱՅՍԻՆ

Henry Dearborn

Zeugnis - Zeugnisse

10/22/24

ԿՈՄՅԵՐԻՏ ԿԱՂՈՆ

(ԿԵՆՑԱՂԱԿԱՆ ՊՈՅԵՄ)

39270

செய்து

1926 டி.



ԿՈՄՅԵՐԻՏ ՎԱՂՈՆ

Ն Ա Խ Ե Ր Գ

Ու Շորշուփ գյուղը վաղուց, շատ վաղուց
կառչել եր, սառչել լեռան մի լանջի,—
շուրջը վանքի վախ, սրբեր հինավուրց
ու բյուր հարածու խմբեր թալանչի:
Հեքյաթ ու զարզանդ, առասպել, աստված...
մարդ ու անասուն կարկամած վախից.
Վողջ գյուղը հոգնած ու վողջ վհատված,
կրծում եր վողջին մի անհայտ թախիծ:
Դարերը գծում գծելով դաղեր,
վողբ ու կոծ, հոգոց, տաղեր անխնդում,
մանկական ցնծուն ծիծաղը թաղել,
խաղն եյին խեղդել դարդի անգնդում:
Աղքատ եր գյուղը, զրկված, հողսակավ,
մի բուռն արտից դեն անջուր անապատ.
հիմքը վողջ կյանքի մի վորջ մեղսական,
սահմանն աշխարհի սարն եր ձյունապատ:
Կեռման փողոցներ, ճահիճ, աղբակույտ,
հյուղերը գյուղի դեռ անլուսամուտ.
վողջ կյանքի տերը յերկինքը կապույտ

Главлит № 221.

Тифлис.

Тираж 1000.

Թիֆլիս, Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգրֆտրիստի 4-դ ապ., Պուշկի. փ. № 3:

և ավանդ անցած մի ժամ կիսամութ:
Հոգնած սել, քարեր, փարախ, արխ ու դեզ,
ծուխ, մշուշ, փոշի, բլրակ աթարի,
դառնում եր ուր ժանգոտ չարխի պես,
կրկնելով ծանոթ կյանքն ամեն տարի:

Յ Ե Ր Գ I

Ձմեռ ե. ցուրտ. սառցե սարեր անարկու.
սուր պարզկա, կիսալուսին, լուսաստղ.
աշխարհը ծեր՝ ծածկած ձյունե վերարկու՝
վրան թառած ույժ մի դաժան ու սաստող:
Հորիզոնում վխտող գայլեր չար-ժանիք.
շան կաղկանձոց. խուլ արձագանք. աղաղակ.
կտուրներին եզ կատուններ... հարսանիք...
ու զլլան լույս ավետող աքաղաղ:
Սարի մեջքին շեկ ու շափաղ լուսաբաց,—
հրո ծովում վառվող ամպեր, մառախուղ,
խսկ Շորշոփ գյուղն, ասես լույսից խուսափած,
դեռ ձորերում որորում ե մարգ ու խուղ:
Կաղկանձում ե ցասկոտ մի շուն շվարած,
վոր մահվան անն ել ավելի շատանա.
յերթիկներին մի ծեր Հիսուս ծվարած.
փարախներում դեի զարգանդ, սատանա:
Դեռ արևը նոր եր շողքը վար գցում,
զարթնել էյին մի աքաղաղ, մի տերտեր.—
հեծեծալով զնգում ե ծեր զանգը ծույլ,
ժայռից-ժայռ ե անցնում քնքուշ մուլթը դեռ:

Առավոտ ե. մի կրկնություն-առավոտ.
ելի յելից սե՛ն ե յե՛նում հեալով.
ելի կժեր, աղուն, ջաղաց դարավոր
ու ժամ քայլող պառավ կանայք սևաշոր:
Եդ որ գյուղում փախցրել էյին մի աղջիկ.
եդ որ զոռով գանձում էյին հարկ հողի,
յերբ մի վաղ խաբար յեկավ քաղաքից,
վոնց վոր յերագ, վոնց վոր մի սուտ սարքովի...—
Միլիոն գինվոր՝ պատերազմում արնաքամ,
միլիոն հոգի՝ մաշված սովից, հյուծախտից,
միլիոն ձեռքեր՝ միասնական, միակամ՝
թագավորին գցել էյին իր թախտից...

Յ Ե Ր Գ II

Անցան որեր, յեկավ կրկին մի գարուն,
բարիքի տեղ չարիք ու չոռ, սովամահ.
Շորշոփ գյուղը տեսավ ավեր ու արյուն,
աղքատություն, ցուրտ ու զրկանք անսահման:
Ես ցավի հետ ինչ-վոր պայքար, սին հույսեր,
ձայնավություն, ինչ-վոր խմբեր վոստվոստուն,
զենքի զոռով ժողով բերած կին ու ծեր,
անճար մարդկանց ճոռում ճառեր ու խոստում:
Ինչքան լավ որ ու ինչքան հող խոստացան,
հնքան վատ որ, հնքան չարիք, չար աղետ.
վողջ մերկ ու խեղճ, ցամաք բերան, անթացան,—
գյուղը վառվեր՝ չեր զգացվի շորահոտ:
Ինչքան ասին՝ կը գան որեր խնդության,

ենքան ավել տեսան ավար, տեսան սուր,
 վողջ արտ ու դաշտ անտիրական, անգութան,
 չորս կողմ հրդեհ, համաճարակ ու սարսուռ:
 Ինչքան ասին՝ սահմանը մեր ծով առ ծով,
 շեն աշխարհից բաժին մնաց լոկ մի բուռ,
 վողջ զղջացին և ապրեցին անցածով,
 քարով շարվեց հույս-յերազի ամեն դուռ:
 Մեծ կռիվը հազար թևով մոտեցավ,
 ահան ու թոփ Շորշոփի տակ գորգուաց.
 հազար-հազար հաշմ ու անտուն մարդու ցավ,
 հազար ձևով սրածուծյուն, կոտորած:
 Քանի ջահել գնաց կռիվ չը դարձավ,
 գյուղը լցվեց քանի վորբուկ, այրի կին,
 քանի տան տեղ մոխիր մնաց հուշարձան,
 քանի զավակ անհարկ թողեց մայրիկին:
 Ու վառվեցին հանգած կրքեր փոշոտված,—
 ազգ ու հավատ, թուրքի վրեժ արնախում,—
 ու բոլորի սիրտը սրով հոշոտված,
 բոլորի կուրծքն արյան հույզով բաբախուն՝
 զբոհ տվին աննպատակ մի ճակատ,
 իբրև հրեշ, իբրև սոված բորենի.—
 յերկրին տիրեց մի ամլության անճարակ,
 ամբարներից հոտը կտրեց ցորենի:
 Քանի գյուղի լեն խճուղի ջաղջախած,
 ավեր կամուրջ, իրարից զատ արխ ու տուն,
 խափան աղբյուր ու բյուր ջրեր անջաղաց,
 փուլ ու փալաս, համատարած տխրություն:
 Թոնիրն անվառ, արտերն անցան, անբաղել,

ոջախի տեղ գերեզմաններ մխացող,
 դեռ վոբքան դի հանդում հոտած, անթաղել,
 վորդեկորույս մոր արտասուք, ծուխ ու ցող:
 Ու Շորշոփը՝ տարին բոլոր անապրուստ՝
 յերնեկ տվեց անդարձ անցած են որին,
 յերբ գեթ թանով ապրում եր նա փորը կուշտ,
 յերբ ոռւս ցարը դեռ իշխում եր աշխարհին:

Յ Ե Ր Գ III

Աշուն ե պաղ. միապաղաղ, թաց աշուն.
 վողբում ե լուռ յերկինքը թուխ հին մի դարդ.
 վողջ ընկղմած անցյալի մեջ յերազուն,
 գիշերն յերկար, ցերեկը կարճ ակնթարթ:
 Ծուխ ու մշուշ, մի առավոտ անհամբույր.
 լացով լցված տրտում ու դառն յեղանակ.
 գյուղի վրա դեռ ծանրացած մահվան բույր.
 չոր ծառերին ակռավի չար յերամակ:
 Դեռ ես գիշեր կար մի շոինդ շատ մոտիկ,—
 վողջի համար թոփ ու թվանք առորյա,—
 իր ցավի մեջ սուղված Շորշոփն անոթի՝
 չեր հասկանում կովի իմաստն այսորվա:
 ...Ու փոսնակոխ, անշող Շորշոփն ես անգամ,
 յերբ դեռ նոր եր զարթնում քնից իր անբուն,
 անիծելով որերը սև, արնաքամ՝
 գյուղում տեսավ կարմիր դրոշ մի կանգուն:
 Յեվ հոռետես, քանդված Շորշոփն ապաբախտ
 ես փոփոխված խաբարից բան չը գիտեր,

գիտեր միայն, վոր փախել են բյուր փափախ,
 վորոնց տերը մի ինքնակոչ իգիթ եր:
 Ու փափախներն ախտաբարո, նենգ ու ցած,
 տարել էյին ինչքան վոչխար, կթի կով,
 հալալ մալը՝ հազար շառով յետ գցած,
 վերջին հացը՝ դատած աղի քրտինքով:
 Քանի սրտի զարկած ձիու սմբակներ,
 քանի քյասիբ մարդու թողած անապրուստ,
 վախկոտ ու ցոփ, սին ու սրիկա խմբակներ
 առել էյին անփառունակ մի փախուստ:
 Թեպետ Շորշոփն արհավիրքից կարկամած,
 գլուխը կախ, դեպի դրոշն անտարբեր,
 բայց իր յեփված հոգու խորքում գոհ մնաց,
 վոր յեկողը գեթ ոռոսական սալդաթն եր:

Յ Ե Ր Գ IV

Յեկան նորեր, արև որեր խարակող,
 հազար հույսեր, աշխարհի տեր կոմիստերն.
 Թափով թնդաց Շորշոփ գյուղը քարակող
 ու հաստատեց հեղաշրջող կոմիտե:
 Գյուղը լսեց, գյուղը տեսավ, վոր չը կան
 քրտինք լափող քյոխվա, գզիր գազազած,
 չարչու շվաք շներ վարձկան ու վորսկան՝
 չքվել են վողջ, խեղճ ռանչպարից վաղ անցած:
 Կռիվն անցավ. գյուղը տեսավ արտ ու հունձ,
 նորից հանդեր, գութան ու խոփ, գերանդի,
 տեսավ ապրուստ, ցեխ հացի տեղ կաթնահունց,—

մի մարդու պես բոլորն յեկան յեռանդի:
 Յեվ զրնգաց հանկարծ Շորշոփն ալարկոտ,
 խոխոջեցին հազար հույզեր հրածին,
 հազար առեր, ծաղկող ծառեր դալարկոթ,—
 ու սարն յելավ հին թշնամի դրացին:
 Հորիզոնում պարզվեց յերկինքն ամպամած,
 դադարեցին արյուն ու բոց, ահագանգ.
 հիմա խաղաղ, ելի հեռվի ճամբան բաց,
 մարդու կյանքը հանգիստ ու թանգ, անվտանգ:
 Բոլոր ազգի գյուղերի հետ յերթեկեկ,
 հացի, հանքի ջինջ տռևտուր փոխեփոխ.
 բոլորի սիրտն ուրախ ու բաց, սեթևեթ,
 փութով փթող թղթերի տեղ վոսկե փող:
 Յեվ ձեռք-ձեռքի հայ ու թաթար ելի մեկ,
 սերտ միությունն արած առողջ կովի զենք,
 սարում ազատ քշում են ելն ելի մեջ,
 վոր վողջ աշխարհն աշխատանքով հրկիզեն:

Յ Ե Ր Գ V

Ու բացվեցին նոր որերի բորբ ափեր,
 բարիք ու բերք, գիրք ու կազեթ, հեռագիր,
 փառքով հարբած չարկամ մարդիկ բոթաբեր
 յերկրից յեղան հավերժական տարազիր:
 Հիմա Շորշոփն արդեն գիտե իր փորձով,
 վոր բազարում չը կա չարչի չար Հակոբ,
 լեն հանդերում աշխատում է մի Ֆորձոն,
 ունի գյուղը պետապի ճյուղ ու բանկոս:

Կա մի խրճիթ-ընթերցարան, լիկկայան,
 ուր որական ներս է գալիս տաս խնդիր.
 խորն են թաղել որերը հին, հարկահան
 ու վողջ դառել ազատ մտքի ունկնդիր:
 Ծեծի, մեծի անարգանքի, դատի դեմ
 հաստատվել է ինքնապաշտպան կին բաժին,
 մի հսկիչ խումբ, ահումբ ու բեմ, պատի թերթ,
 վոր միշտ հասնեն տանջվողների որհասին:
 Ես վողջի հետ Շորշոփն անլաց, անկական
 տալիս է ծափ ու խնդության արձագանք.
 ես վողջի հետ մի խենթ քայլերթ մանկական
 զնգում է զիլ՝ հազար հնչուն արձակած.
 և հավաքված բոլոր, բոլոր կողմերից,
 անգամ աղքատ հանդի հոտաղ, հորթարած,
 վողջ պիոներ, վողջ մարտական կոմյերիտ,
 կիզվում են հար՝ մի բորբոքուն հուր դառած:
 Կարմիր դրոշ, փող ու փայլակ ճարակող,
 շոխդ, շաչյուն, իրարանցում, խաղ ու տաղ.
 բատրակ մարդկանց մերկ մանուկներ ճառ ասող,
 մի լուռ զարմանք, շրջող մի լուր թաղեթաղ:

Յ Ե Ր Գ VI

Մենակ է նա,— Շենենց Վաղոն պատանի,—
 անմասն ու լուռ ես մարտակոչ հողմերից.
 հերը կուլակ՝ նստել է ձին սատանի,
 չի հանդուրժում ըմբոստ խումբը կոմյերիտ:
 Շենենք ընտրյալ, աստվածավախ, լիք ոջախ,

Շենենց համար խոսքը գյուղի միշտ ատված,
 Շենենց աչքում շարժումը ժիր մի փուչ խաղ,
 խորն ատելի ես նոր խմբերն անաստված:
 Բայց պատանի Վաղոն կրթված, ընդունակ,
 ուսումն արդեն ավարտել է քաղաքում.
 Վաղոն վառված, գիշեր-ցերեկ շարունակ,
 հորն ու մորը համոզում եր, աղաչում...
 Վաղոն ազատ, Վաղոն ազիզ, մինը մոր,
 յերեք սարի յուղ ու մեղրով մեծացած,
 Վաղոն հաղթող, յերես առած ունևոր
 և դեռ յերեկ ամբողջ գյուղից մեծարված:
 Այսոր Վաղոն իր աշխարհում տեղ չունի,
 այսոր Վաղոն դադվում է խոր նախանձով.
 անտակ ու լի տունը վանդակ թռչունի,
 աշխարհը նեղ, աչքը տխուր, թախանձող:
 Հալվում է նա ծփուն գործի ծարավով
 ու փափագում դեպի պայքար, կյանք դեպի.
 դեպի ջահել խմբերը վառ, փառավոր,
 դեպի մարզանք, հուզված հանդը հանդեպի:
 Յեվ դեռ Վաղոն հոր շնչի տակ յեսական
 չեր վերլուծել որերի հարցն իր խրթին,
 հանկարծ հանեց հզոր վճիռ ես անգամ—
 կոմյերիտին տալ ինքնակամ մի խնդիր...

Յ Ե Ր Գ VII

Գարուն է տաք. մի շողշողուն կիրակի.
 խանդավառվել հուր ու թրթիռ հարազատ.

եղ որերում ջուրն եր բացվել Շիրակի,
լուրը հասել Շորշոփ գյուղին քարաշատ:
Տոն ե. շարժում... Ժողով, Ժողով լուսելուս.
եղ որ միտինգ, եղ որ պահանջ անարգել
և աննահանջ հազար մի հարց լուծելու—
հիդրոկայան, առու, ճամբա կամ արտել:
հարմիր արև. դեռ վաղորդյան շաղ ու զով.
ծաղկի գույներ, ցող ու ցնցուղ բուրավետ.
մարդիկ ուրախ, աշխատանքի աշխուժով,
կյանքով լցրել, ցնցում են քար, արահետ:
եղ որ վողջ գյուղն աշխատում ե կորովի.
եղ որ հույսի հիմքն են գցում անդրանիկ,
վոր ունենան արտ ու հանդեր ջրովի,
վոր հաց ուտի հազար սոված ընտանիք:
եղ որ դաշտում ինչքան աղջիկ զնգզնգուն,
եղ որ ասես ժպտում ե սարն անթառամ.
ամենքի գիրկն անուշ վարդեր գույնզգույն,
աղինջ ու բոխ, սինձ ու սիբեխ կաթնահամ:
եղ որ գյուղով անցավ մի մեծ սավառակ
ու հյուղերին հաղորդեց հուրն հանձարի,
յերբ բռնի տակ մի նահատակ ավանակ
կարծում եր թե ինքն ե անիմա աշխարհի:
եղ որ գյուղում հանդես ու խաղ մանկական,
թմբուկները թափով թնդում թաղերում,
քայլում են վողջ դեպի փայլուն ապագան,
հինը թաղում նոր հորինվող տաղերում:
Յեվ եղ տոն որն ով ցանկանա, ով կուզի՝
կոմյերիտում նոր անդամ են ընդունում.

եղ որ բաց են դռները լայն կոմկուսի,—
եղ որ թագուն Վաղոն հանձնեց մի դիմում:

Յ Ե Ր Գ VIII

Շորշոփ գյուղի ժամը փակված. չը կա ծես.
հիվանդ ե ծեր տերտերն անտեր, վորբացած.
խունկի տեղակ վարդ ու նարգիզ ժպտատես,
գերեզմանում չը կան կանայք վողբասաց:
Զանգի կոծը ել չի զնգում ծոր տալով,
չեն աղոթում ծերերն ամեն առավոտ.
փող ու թմբուկ, կարմիր դրոշ ծոպավոր
զարդարում են վերնատան տեղն արևոտ:
Ավանդ անցած գմբեթ ու խաչ բերած ցած,
բեմ ու խորան խաչվառագուրկ, անմասունք,
ամեն կողմից աստված ու վախ վերացած,
ժամը հանձնած կոմյերիտին թարմաշունչ:
Նորոգել են պատերը հին, աղքատիկ,—
ժամը նախկին ասես դահլիճ լինի մի,—
չորս կողմ փոված լույս ու լողունգ շաղկապի
և անկյունում ըմբոստ բյուստը Լենինի:
Լալկան կանանց, ծույլ մարդկանց տեղ ամեն որ
բյուր պատանի անում ե շտապ ներս ու դուրս,
թափ ու ծափով ծփում ե կյանքն ամենուր,
կոփվում ե կամքն աստվածուրաց, ուխտադուրժ:
եղ վողջի մեջ Վաղոն մի դեմք յեզակի.
Վաղոն հիմքն ե աշխատանքի տարերքի.
Վաղոն ծանոթ տասը տեսակ փեշակի,

իր ուսերով տանում ե լուծն ամենքի:
Վաղոն փարել, վառել ե բյուր նպատակ,
իր հետ տարել հարյուր մանուկ մարտական,
վողջին դարձրել վուսկի խոսքի հպատակ,
վողջին արել առողջ գործի պարտական:

Յ Ե Ր Գ IX

Գիշեր ե լուռ. մտել են քուն ամեն տեղ.
խավարը խոլ վարարում ե, խորանում.
վողջ Շորշոփում թարթում ե մուգ մի կանթեղ,—
մեկն արթուն ե կոմբերիտի խորանում:
Աշխատում ե կրկին Վաղոն ժրջան, —
Վաղոն վաղուց քարտուղարն ե բշիջի.—
մենակ ե նա, բայց շուրջը հուր, հրացան,
յեթե ուզի՝ հազար մարդու կը ջնջի:
Վախ չունի նա. քարափների, քարերի,
մութ ալբերի սուտը գիտե հիմա նա.
վերցրել ե քողն ու մշուշը դարերի,
դեռ ուզում ե հազար գաղտնիք իմանա...
Ես իսկ շենքում աղոթել ե հազար մարդ,
ես շենքն ուղի հին որերի մերձեցման,
ես շենքն ունի բյուր առասպել հնավանդ,
ես շենքի տակ ինչքան անհայտ գերեզման:
Հանկարծ մի ձայն... ցնցում... ցնորք... պաղ քրտինք...
ու վաղորդյան աղջամուղջ ե դուրսն արդեն...
բյուր վոտք ասես հանկարծ առան մի տրտինգ,
չար ու բարի կրկին յեկան իրար դեմ:

Վաղոն սառեց. լույսը քաշեց կանթեղի,
վոր վախն իր մեջ չը նկատի վոչ մեկ աչք.
ինչքան սաստեց սրտի սարսուռն անտեղի,
ենքան ավել մտքով անցան սուրբ ու քաջք:
Եդ որերում շրջում եր լուռ մի համառ,
թե հին մի սուրբ յեկել ե գյուղն հարևան,
անուժ ծերեր, ծծկեր մանուկ անհամար
դարձրել պարող, թեթևաթև փահլևան:
Լույսը հանգավ, լսեց մի հեք տենդագին
ու պատի տակ տեսավ մի սովեր վոստոստուն.
լուսնի մի շող դողդողում եր հատակին,
շշնջալով ինչ-վոր մի խոսք, մի խոստում:
Ու շնչասպառ Վաղոն յեկավ իր տեղից,
անվախ Վաղոն՝ ինքն իրենից հուսախաբ.
հոգում զսպած մի խոր սոսկում, մի թախիծ,
Վաղոն հաղիվ գլխապատառ դուրս փախավ:

Յ Ե Ր Գ X

Ամառը վառ մոտենում ե վախճանին.—
ամենուրեք ցորեն ու բերք ամբարած.
թուփ ու թթու, չոր աերեններ աղցանի,
տարվա տված ճուտ ու ճիվը համբարած:
Մարագ ու բակ լցված աթար, հարդ ու խոտ,
ջրաղացներում հաց աղալու անծայր հերթ.
չը կա չարկամ, պահանջատեր մարդու հոտ,
փողոցներում դարձյալ մանկանց աշխուժ յերթ:
Շորշոփ գյուղում բերքի տոն ե ու բերկրում,

աշխատանքի ցուցահանդես ակումբում,—
 զարթնել ե պարզ մի նոր պահանջ վողջ յերկրում,
 մի անճանաչ գործի ճաճանչ ու խնդում:
 Ամեն կողմից, ամեն գյուղից ու տեղից
 դրված ե ցույց հազար ապրանք ցուցանակ.
 բերված ե բյուր հացի նմուշ, ուտելիք,
 ձեռքի գործեր՝ շահած գովեստ, մրցանակ:
 Վորն իր ցուլն ե ցույցի հանել, վորն իր ձին,
 վորը նյութեր՝ արտ ու բոստան վոռոգող,
 վորը լծկան, վորը մի հորթ նորածին,
 վորը մեղու, վորը յերինջ, վորը կով.
 վարունակ, վարսակ, գետնախնձոր, ճակնդեղ,
 մանած թելեր, ներկեր, գորգեր ու կապերտ,
 թրթուռի թույն, արտերն ուտող մկան դեղ,
 կտավ, ժանյակ ու խալիներ նրբակերտ.
 Թոնրի տեղը մի նոր մոդել հնոցի,
 գուլթան ու խոփ, կալի կամեր նորաձև,
 հազար մի բույս, կենտրոնախույս, խնոցի,
 սերգատ, մանգաղ, փոցի ու սղոց, չորոցներ:
 Ու գյուղը հին իր իսկ գործից զարմացած
 յեռում ե վառ՝ առավոտից մինչ գիշեր,
 նոր բարևից, բորբ արևից թարմացած՝
 վողջի հոգում արթնանում ե կյանքի սեր:
 Ու մանուկներ, պատանիներ խմբերով
 բորբոքում են խոհուն խոհեր լուսարծարծ,
 հազար պատգամ՝ հազար մի նոր բան բերող,
 վողջի առաջ պարզում են պարզ հազար հարց:
 Գյուղն ես անգամ չը բաժանվեց յերկուսի,

վողջ միակամ վողջունեցին գործը մեծ.
 մեկ Վաղոն եր, վոր բոլորից մեկուսի,
 ասես չը կար, կենդանի չեր մարդկանց մեջ:

Յ Ե Ր Գ XI

Են որվանից անցել եյին շատ որեր,
 յերբ արթնացավ Վաղոյի վախն առաջին.
 ու դեռ քանի անհայտ մանուկ գուրգուրել,
 լծել եյին նոր որերի շառաչին...
 Վաղոն գիտե, վոր աշխարհում չը կա վախ,
 բայց ել մթնով չի կատարում վոչ մեկ այց.
 դեռ նա յերեկ աղատ մտքի դեկավար,
 այսոր մտքում չունի լույսի գեթ մի կայծ:
 Վաղոն ասես աշնան մի ծառ փետրաթող
 ու սրտի մեջ նստած մի մեծ աղաքար...
 Վաղոն «թոքախտ», Վաղոն ունի «թագուն դող»,
 ասում եյին՝ «Վաղոն խենթ ե, ցավագար»:
 Գուշակում եր մերը նղովք յերկնային,
 հորդորում եր վորդուն դառնալ ծուռ ճամբից,
 հերն եր խնդրում, վոր գեթ խղճա, խնայի
 ու վոտքի տակ չը տա նամուսն իր անբիծ:
 Վաղոն շվար, յերկու բարի արանքում,
 չեր հասկանում՝ վորն ե ճամբան ճշմարիտ.—
 եստեղ սրանք, եստեղ սոսկումն արնախում,
 եստեղ ծնող, եստեղ կյանք ու կոմյերիտ:
 Յեվ որեցոր Վաղոն հավում, բարակում,
 դառնում եր շուրջն անհայտ շանապատ.



և ակամա սուղված վախի վարակում
քաշվել ե նա տանիքի տակ սեպապատ:
Աշխատանքի թափը պակաս, յերերուն,
եւ յեռանդով չի աշխատում գիշերով.
միտքը մթնած հեռուներին սեւեռուն,
ապրում ե սոսկ դատարկ ու սին հուշերով:
Ու վոչ մի մարդ, վոչ մի ընկեր մերձավոր
նրա մաշող վշտին չը կա իրազեկ.
Վաղոն թախծոտ, անմեկնելի մի ցավով
դեռ գնում եր որերի հետ հրաշեկ:

3 Ե Ր Գ XII

Մոտիկ գյուղի շեֆն եր կաղմը Շորշոփի.
եդ որ ենտեղ կար մի կնուճք, հարսանիք.
կանչվել էյին կոմյերիտից չորս հոգի.—
կոմյերիտին նվիրվում եր մի սանիկ:
Հյուր եր Վաղոն. լուռ եր Վաղոն, մտածկոտ.
չեր լսում նա գուռնի աղմուկն ահագին,
չեր տեսնում իսկ ջահելներին՝ մտած կոխ,
խաղը շուրջպար, կանանց տաղը լալազին...
Ես մեկը դեռ հին կենցաղից կար ավանդ,—
խինդ ու տաղից, զիլ ծիծաղից ի՞նչ փառ.
որերը հին, վորպես ուխտի քարավան,
նորերի դեմ կանցնեն, կերթան քանց սնազ:
Ավագ դեպքն եր, զարմանք ու վախ ամենուր.
տերտերի տեղ մի խումբ մանուկ համազգեստ.
ո՞վ եր տեսել՝ կնուճքն անեն անմեռոն

ու հարսանիքն եսքան թեթե, եսքան հեշտ:
Վաղոն տրտում, քաշված հեռու, առանձին,
մտորում եր անցյալ մի հուշ, մի մութ վիշտ...
ու մեն-մենակ, գուռնի զիլ ձենն ականջին,
Վաղոն գյուղից յելավ ճամբա անհանգիստ:

...Իրիկնամուտ. հորիզոնում թող ու մութ.
նախիր ու հոտ տուն են դառնում բառաչով.
փորված ակոս, փռված դաշտեր խաժամութ,
քարափի տակ հստակ մի գետ շառաչող:
Արևն իջավ իր կամարից կապուտակ.
սարի գլխին շափաղ ու շող հրկեզող.
հանդը քնեց քնքուշ ու մեղմ քամու տակ,
ամպերն անցան ջուր խմելու դեպի ծով:
Անդորր ձորեր, կապույտ մշուշ, մառախուղ,
արձակ ու լայն, թավիշ դաշտեր վարդաշատ.
անհայտի մեջ սուղված սեղեր, սար ու խուղ,
վրան կապած մի ջինջ կամար աստղազարդ:
Լուսին. լույսեր. ժայռի շվաք ահեղի.—
դեռ մինչև գյուղ կա բավական ճանապարհ...
Վաղոն հիշեց հին արկածներն այրերի,
ու չորս բուրն ասես դարձավ անապատ:
Յե՛վ ակամա հիշեց Վաղոն, վոր վաղուց
ես կողմերում յեղել ե բուն քաջքերի...
ճամբամիջում, մենակ, Վաղոն իր վախից
հեռվի լույսերն ընդունեց տեղն աչքերի...
Լսեց ելի մի հոնդյուն վախվորած,—
շան, թե՛ գայլի խուլ աղաղակ հեռավոր, —

մի աստղ ասես անից պոկված վայր ցոլաց,
 ու մոտիկում քաջքերն անցան հեալով...
 Հանկարծ թնդաց մի հարսանիք ձորերում,
 զուռնի զիլ ձենն աշխարհով մեկ զրնգաց.
 Գաշտի վրա բյուր ստվերներ յերերուն
 արշավեցին գիժ քամու պես սրնթաց:
 Վաղոն տեսավ հազար պարող նորահարս,
 վողջի կրծքին վոսկու շարան ու սաղափ,
 տեսավ վողջի դեմքն այլանդակ, վոտը թարս
 ու սարսափից փովեց գետին ուշաթափ...

Աստղեր, աստղեր, արծաթասփյուռ լուսնիկ,
 խաղաղաշունչ, անմռունչ եր յերեկոն...
 ընկերները գտան նրան անզգա,
 յերբ կնունքից դառնում եյին յերեքով:

Յ Ե Ր Գ XIII

Ու չը մնաց դեպքը գաղտնի ես անգամ,
 Վաղոյի ցափն ամբողջ գյուղում իմացան.
 Իսկ նրա կոշտ, կուլակ հերը յեսական
 կարծում եր թե կատարվեց խոսքն իր ասած:
 Վաղոն հիմա մի անշունչ իր, խաղալիք,
 անդարձ ընկած ծնողների ծուղակում,
 իր հույզերին՝ և՛ վառ ներկա, և՛ գալիք՝
 կարդում են պարզ մի վաղաժամ հուղարկում:
 Սրբի դռներ, մոմ ու մատաղ վանքի տակ,
 աղոթք, աղերս, թլիսմ ու թուղթ, թղթաբաց,

ու մոր ամեն արարքի հետ անգիտակ
 գնում եր լուռ՝ անճար Վաղոն վշտացած:
 Հիվանդ ե նա, անույժ ընկած անկողին.
 Վաղոն կրկին վեր կենալու չունի հույս.
 Նայում ե դուրս, փողոցներով անցնողին
 ու բորբոքում քանի յերազ, քանի հույզ:
 Հիշում ե նա հմայքն անցած որերի
 ու մշտախինդ իր սիրտը պինդ, ռազմական,
 անդուլ թափած իր աշխատանքն անթերի,
 անվախ ու կուռ ընկերներին ամրակազմ:
 Ու գիտե նա, վոր բյուր Վաղո աներկյուղ
 ընդդեմ հնի տանում են դեռ մենամարտ,
 ել վոչ մի քաջ չի այցելել վոչ մի գյուղ,
 սրբի անից չի սարսափել վոչ մի մարդ:
 Վողջի համար աշխարհն ազատ, լավ ելի,
 վոչ մի բերան չի բամբասում, անիծում,
 կոմյերիտի ույժն ու աշխույժն ավելի,
 սոսկ Վաղոն ե մաշվում մահվան մահիճում...

Յ Ե Ր Գ XIV

Զտում եյին կոմյերիտի կազմը խիստ.—
 դուրս արվեցին մի խումբ անձեր անվավեր,
 իսկ անձնվեր մի խումբ դարձավ կոմունիստ...
 գտվեց Վաղոն... գատվեց, զրկվեց առհավետ...
 Վաղոն լսեց դատավճիռն իր դաժան
 ու գալարվեց, վորպես մի ցուլ շանթահար.—
 կոմյերիտի կոչման Վաղոն անարժան,

Վաղոն հեռու յեռ ու զեռից խոնդավաճ...
պոռթկաց մի ճիչ, մի աղեկեղ հեկեկոց
ու սաստկացավ անուրի ցավն ավելի.
բայց վիշտը մեծ պարտկեց իր տան հարկը գոց,
տանջանքը խոր տեսավ մի շող արևի...

Շեփորամարտ. հազար գործի հրավեր.
լցվում է գյուղն անթիվ ու նոր մարդկանցով,
աշխատասեր յեռուն անձեր հրաբեր՝
յերեսն ուղղած դեպի գյուղի դարձը ծով:
Կոմյերիտից, կոմբլիշից քանի՜ մարդ
անցել էին համալսարան քաղաքի,
դեպի բանֆակ քանի՜ բատրակ բանիմաց,—
ու հերթի մեջ էլի մի խումբ անագին:
Փողեր, ծնծղա ու ցնծություն փողոցում,
յերգ ու շքերթ՝ վողջ աշխարհի տերն էլի,
վոր Վաղոյի կյանքի թելն են սղոցում
ու պատրաստում ամեն վայրկյան մեռնելու...
Ու մի ժպտուն, մի ծիծաղկոտ, պայծառ ուր,
յերբ արևը լույս եր սփռում հավասար,
յերբ հազար մարդ շարժվում եր ժիր, խայտալով,
Վաղոն հավերժ մտավ մի քուն վաղաժամ:

Վ Ե Ր Զ Ե Ր Գ

Ու գյուղը Շորշոփ արևով հարթած
կանաչ լանջերում յեռում է ցնծուն.
ծաղկում է այնտեղ մի կյանք գրկաբաց,

կարմիր որերի կարկաչն է հնչում:
Վաղուց սառել է հավատն առ աստված.
չի սոսկում վոչ վոք շարքերի վախից,
վողջ գյուղն ավարից, ցավից ազատված
ապրում է ազատ իր կյանքն անթախիծ:
Որերը վարար բերել են նվեր
քրտնաջան մարդուն մի աշխարհ շքեղ,
ու հին ցեցի տեղ սրտացավ լավեր,
յերգ ու խնդություն, մանկական շքերթ:
Գյուղի կուլակներն յեղած փետրաթափ,
ել չեն մարմաջում անմիտ կասկածով.
լուծվել են հազար հարցեր հրատապ,
դարձել են բոլորն արթուն, հասկացող:
Գիտեն, վոր հետ չեն աշխարհից յեռուն,
վոր արշավում են որերի թափով,
բայց գիտեն՝ հիմի արեշատ հեռուն
կա հաղթանակի ել ուժգին թափոր:
Գիտեն՝ կա ռազիո, հեղրոշեն, մաշին,
կարկտահար շանթեր ու ինչքան տրակտոր,
գիտեն, վոր շուտով, մեկ ուր միասին,
կը հասնեն նրանց՝ կոլեկտիվ կամքով:



Լ ՈՒՅՍ ԵՆ Տ Ե Ս Ե Լ

1. «ԳՅՈՒՂԵՐԻ ԿԱՆԶԸ» Գինն է 75 կոպ.
2. «ԿՈՄՅԵՐԻՏ ՎԱՂՈՆ» (կենցաղական պոյեմ). » 25 »

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. «2000 ԹՎԻՆ» (պոյեմ)
2. «ՍՐԲԻ ՂՈՒԼԸ» (կենցաղական պիյես 3 գործ.)
3. «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ» (բանաստ. ժողովածու)
4. «ՀՐԱԶԴԱՆ» (գյուղական պատկերների ժողով.)

Հեղինակի հասցեն՝ Тифлис, Вознесенская 8, ՊԱՀԱՐԵ

ՀՀ Ազգային գրադարան



NL0358981

49435

ԳԻՆՆ Ե 25 ԿՈՊ.

ԾԱՊԻԿԸ Հ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ